ՀԱՅՐ ՖԻԼԼԻՊ ՍԹՈՐՐ-ՎԵՆԹԸՐԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՍԲ. ԶՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(15 ապրիլի, 1998)

«Ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլիա,
անդ տեսանիցէք զնա, որպէս ասացն ձեզ»:

«Նա գնում է Ձեր առջևից դեպի Գալիլիո երկիր:
Դուք կտեսնեք Նրան այնտեղ, ինչպես որ նա խոստացել էր»:
(ՄԱՐԿ. ԺԴ 7-8)

Այսօր մենք կկարդանք հատվածներ Սբ. Մարկոսի Ավետարանից, ամենավաղ և համառոտ գրված Ավետարանից: Այն գրված է պարզ և կենդանի ոճով՝ ընթերցողին հակիրճ ու հստակ ներկայացնելով մեր Տիրոջ կյանքը երկրի վրա: Սբ. Մարկոսի Ավետարանը ավարտվում է Տիրոջ հարության լուրով: Ի տարբերություն Սբ. Մատթեոսի ու Սբ. Ղուկասի Ավետարանների, Սբ. Մարկոսի Ավետարանում չկան մանրամասներ Քրիստոսի հարությունից հետո իր հետևորդների հետ հանդիպումների մասին: Սբ. Մարկոսը միայն ասում է, որ Քրիստոս հարություն է առել, և որ նրան կարելի է տեսնել Գալիլիո երկրում: Ըստ Սբ. Մարկոսի, Տիրոջ հարությունից հետո մանրամասների կարիք չկա, քանի որ իր համար հենց այդ փաստն է ամենից կարևորը: Փաստ, որ Քրիստոս հարություն առավ մահացածներից, ինչպես և խոստացել էր: Այդ իրադարձությունը որքանով էլ միակն է աշխարհի պատմության մեջ, դեռևս պատմության վերջը չէ, այլ մի նոր սկիզբ:

Ավետարանի երիտասարդի համար գտնել Քրիստոսին Գալիլիո աշխարհում մի քիչ տարօրինակ ու անսպասելի է, քանի որ Քրիստոսը պետք է լիներ Երուսաղեմում՝ Հուդաիզմի Սուրբ քաղաքում: Երուսաղեմը Դավիթ արքայի քաղաքն էր, տաճարների քաղաք էր, քաղաք, ուր Քրիստոսը եկել էր նշելու հրեաների՝ եգիպտական լծից ազատագրվելու տոնը: Դա նաև այն քաղաքն էր, որ մերժել էր Նրան ու Նրա միջոցով՝ Աստծո ուղարկած լուրը: Գալիլիո երկիրը Սրբազան հողի առևտրատեղն ու շուկայատեղն էր ու շատ հեռու Երուսաղեմի աստվածապաշտությունից ու նրա ուղղափառությունից: Իսրայելն այսօր ճիշտ այդ ձևով է բաժանված: Երուսաղեմը Մովսեսի կրոնի գերուղղափառ քաղաքն է, ուր պահպանվում է օրենքի տառը: Վերելակները չեն աշխատում, կերակուրը չի տաքացվում, և ծխելն արգելվում է շաբաթ օրը, քանի որ լուցկի վառել՝ նշանակում է աշխատանքի մեջ ընդգրկվել: Երուսաղեմից դուրս կյանքը տարբեր է ու եռում է ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսի ժամանակ:

Ես հավատացած եմ, որ Քրիստոս չգնաց Երուսաղեմ ոչ այն բանի պատճառով, որ այդ քաղաքը չէր ընդունել իրեն, այլ որ նա ժամանակ չուներ դատարկ ու անիմաստ արարողությունների համար, որ ուղղափառ հրեա հոգևորականությունն առաջարկում էր ժողովրդին: «Բացեք ձեր սրտերը» արտահայտությունը

տեղին է հիշել այստեղ: Քրիստոս գնաց Գալիլիո երկիր, որովհետև դա այն տեղն էր, ուր մարդիկ ապրում էին իրական աշխարհում, ուր կար կյանք, ուր կարելի էր գտնել կյանքը իր լավ և վատ կողմերով: Եվ այսօրվա աշխարհում մենք ապրում ենք մեր «Գալիլիո» աշխարհում, այն առևտրատեղում, ուր կարելի է գտնել աշխարհի լավն ու վատը: Եվ ինչպես մեր հարություն առած Տիրոջը մենք գտանք Գալիլիո աշխարհում (ըստ Սուրբ Մարկոսի Ավետարանի), ճիշտ այդպես էլ մեր հարություն առած Տիրոջը մենք կգտնենք մեր «Գալիլիո» երկրում այս Զատկին:

Անցյալ շաբաթ ես այցելեցի Խոր-Վիրապ: Այն եղել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի բանտարկության վայրը երկար տարիներ: Մինչ ես կանգնած էի այդ խոր գետնափոր բանտախցում՝ նայելով այդ փոքրիկ լույսի նշույլին, որ թափանցում էր բանտախուց, ինձ հանկարծակի ապշեցրեց մի հակասող գաղափար այն առումով, որ այդ Սուրբ մարդը բանտարկված էր մթության մեջ՝ նայելով վերև, դեպի լույսը, մինչդեռ իրականում այդ երկրային խավարի մեջ նա այն միակն էր, որ ապրում էր Հիսուս Քրիստոսի իրական լույսով: Իսկ նրանք, ովքեր ապրում էին երկրային լույսի մեջ, իրականում խարխափում էին խավարում: Նրանց աչքերը դեռևս պիտի բացվեին մկրտությամբ և Քրիստոսին որպես մեր Տեր ընդունելով:

Աշխարհը, ուր մենք ապրում ենք, այսօր ոչնչով չի փոխվել: Գիտությունն առաջ է գնում, և մեր գիտելիքներն ավելանում են, բայց մենք մեզ դեռևս պահում ենք այնպես, ինչպես Քրիստոսից առաջ: Նայեք ձեր շուրջը ընթացող պատերազմներին, աղքատությանը, ատելությանն ու տգիտությանը: Մարդը մարդու նկատմամբ անմարդկային է: Եվ այս ամենից հետո մենք համոզում ենք մեզ, որ մենք կարող ենք վերահսկել մարդու կյանքը լաբորատոր պայմաններում, արհեստական միջոցներով:

Մենք ապրում ենք մի աշխարհում, ուր լավատեսությունը, որը ողջունեց ԺԹ դարի հայտնագործությունները, երբ գիտնականներն ու ճարտարագետները կարծում էին, թե գիտեն աշխարհի բոլոր խնդիրների պատասխանները, փոխարինվեց իրականությամբ, այն է՝ երկրի պաշարները անսահմանափակ չեն, և որ մարդկային ցեղը պատասխանատու է երկրագնդի ոչնչացման համար: Բայց դեռևս մենք չենք ընդունում այն, որ Քրիստոսի մեծության հետ համեմատած մենք պարզապես երեխաներ ենք, որոնց աչքերը նոր են բացվում:

Նրանք, ովքեր հավատացած են, թե գիտեն աշխարհի բոլոր խնդիրների պատասխանները, պարզապես հիմարներ են, որ ապրում են այս աշխարհի կեղծ լույսով, ճիշտ այնպես, ինչպես Գրիգոր Լուսավորչին տանջողներն իրենց կերպարանափոխությունից առաջ: Սուրբ Պողոսը ճիշտ նմանատիպ իրավիճակ ապրեց: Նա հավատացած էր, թե ապրում է ճշմարտության լույսով ողողված մի աշխարհում, աշխարհ, որ կառուցված էր հունական տրամաբանության վրա, որ ամենից վերն ու հզորն էր: Բայց միայն կուրանալուց հետո նա գիտակցեց, թե որն է իրական լույսը: Դա Հիսուս Քրիստոսի լույսն էր: Իրականում նա ապրել էր խավարում ողջ ժամանակ: Այս Զատկին, ինչպես միշտ, մեզ հնարավորություն է ընձեռնված՝ խորհել հարության ճշմարտության մասին: Հարության պատմությունը մեզ հիշեցնում է Հիսուս Քրիստոսի՝ մեզ հաղորդած լուրի յուրահատկության մասին: Հիսուս Քրիստոս հարություն առավ մահացածներից և հայտնվեց իր հետևորդներին՝ ապացուցելու Ավետարանում ասվածի ճշմարտությունը: Եթե

Քրիստոս պարզապես մահանար խաչի վրա, այդ դեպքում մեզ համար ոչ մի հայտնություն չէր լինի: Բայց նա պարզապես չմահացավ Խաչի վրա: Նա նորից հարություն առավ մահացածներից: Նոր Կտակարանի այսօրվա ընթերցվածը կարդալիս Սուրբ Պողոսը կենտրոնանում է առանցքային և առանձնահատուկ իրադարձության վրա, որը բերել է մեզ մեր հայտնությունը: Սուրբ Պողոսը, որը գրում էր իր թղթերը Ա դարի կեսին, հանդիպել է մեր Տիրոջ հարության ականատեսներից ոմանց: Նա նույնիսկ չէր էլ կասկածում Քրիստոսի ֆիզիկական հարությանը: Դա տեսիլք չէր, տենչալից մի հույս, թե Քրիստոս վերադառնում է: Քրիստոս հարություն էր առել մահացածներից և ոգևորել իր հետևորդներին: Նա գնացել է նրանց առջևից Գալիլիո երկիր, և չնայած այն հանգամանքին, որ նա հետագայում համբարձվել է իր հետևորդների տեսադաշտից, նա մնում է մեզ հետ, ինչպես և խոստացել էր:

Այսօր, Հարության այս սուրբ օրը, մենք եկել ենք հաղորդվելու մեր Տիրոջ մարմնի և արյան հետ: Հաղորդությունը մի սուրբ խորհուրդ է, որի ժամանակ մենք բացում ենք մեզ մեր Տիրոջ աստվածային ներկայության համար: Մենք նման ենք կավի, որին կավագործը տալիս է ավարտուն առարկայի տեսք, իսկ Աստված մի սուրբ ու մաքուր կրակ է, որ կթրծի մեզ թրծարանում: Այս հաղորդության ժամանակ մենք գիտակցում ենք մեր թուլություններն ու ձախողումները և ընդունում Աստվածային էության հզորությունն ու մեծությունը:

Սա մի հնարավորություն է, որ մենք բացենք մեր աչքերը իրական լույսի առաջ, ինչպես պատահեց Սուրբ Պողոսի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի և այլ սրբերի հետ, լույս, որը ճառագայթում է միայն մեր Արարիչ, Փրկիչ և Լուսավորիչ Աստծուց: Մենք լսեցինք Հիսուս Քրիստոսի բարի լուրը: Թող մենք գտնենք Նրան մեր սեփական Գալիլիո աշխարհում այս Զատկին, այստեղ՝ Երևանում:

Աստված ձեզ հետ այս Զատկին, և մաղթում եմ ձեզ և ձեր սիրելիներին Սուրբ և օրհնված Զատիկ: